ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.16. Հնդկաստան: Բնակչությունը, տնտեսությունը

• • •

Հնդկաստանը հիմնականում գյուղաբնակ երկիր է: Հաշվարկով հիմնավորեք գյուղական բնակչության բացարձակ թիվը: Գյուղական բնակավայրերը շատ խոշոր են՝ մինչև 20 հազար բնակչությամբ: 20 հազարից ավելի բնակիչ ունեցող բնակավայրը համարվում է քաղաք: Եթե գիտես այլ պետությունների համապատասխան ցուցանիշներ, կարող ես համեմատել և վերլուծել:

• • •

Խոշոր գաղթօջախներ էին Մադրասը, Կալկաթան,որոնցում բարձր կոնսոլիդացված հայ համայնք կար՝իր դպրոցներով, եկեղեցիներով, միություններով: Հայերի առավելագույն թիվը հասել է 25 հազարի (նշենք, որ այսօր արդեն պաշտոնական վիճակագրական տվյալներով 25000-ի հասնում Հնդկաստանից եկածների թիվը ՀՀ-ում): XX դարավերջից հնդկահայ գաղութը թուլացավ, հայերը արտագաղթեցին և նրանց թիվն այժմ շատ փոքր է:

• • •

Հնդկաստանը տնտեսական զարգացման բարդ,ինքնատիպ ու երկարատև ճանապարհ է անցել, ինչը պայմանավորված է ոչ միայն հայտնագործմամբ և գաղութային անցյալով, այլև բնակլիմայական պայմաններով,բնակչության էթնոժառանգական առանձնահատկություններով կայլն: Միջնադարում , Հնդկաստանում արտադրված շատ ապրանքատեսակներ՝ ոսկերչական իրերը, ոսկեթել գործքվածքները, հուշանվերները(մասնավորապես՝ փղոսկրից պատրաստված), թանկարժեք քարերը և այլ ապրանքներ իրենց արտաքին շքեղ տեսքով ու որակով զարմացրել և հրապուրել են եվրոպացիներին:

• • •

Ի տարբերություն գաղութային այլ երկրների, Մեծ Բրիտանիան Հնդկաստանում ստեղծեց գործարաններ ու ֆաբրիկաներ և որոշ հանքատեսակներ սկսեցին մշակել տեղում՝ նպաստելով հանքարդյունաբերության, թեթև և սննդի արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացմանը՝բամբակեղենի և ջուտեղենի, թեյի , շաքարի:

1970 ականներին սկսվեց Հնդկաստանի արդյունաբերական զարգացման նոր փուլը, որի շնորհիվ մի շարք արտադրատեսակների գծով երկիրը կարողացավ բավարարել իր պահանջարկը: Մշակվեց պետական ծրագիր՝ երկիրը մշակող արդյունաբերության արտադրանք արտահանող դարձնելու նպատակով:

• • •

Հնդկաստանը ավանդական թեթև,սննդի արդյունաբերության ճյուղերից անցում է կատարել դեպի ծանրը՝ մետաղաձուլություն, քիմիական արդյունաբերություն, մեքենաշինություն՝ (որ ամենակարևորն է՝ ռազմական ինդուստրիա) ծանրակշիռ դեր խաղալով Համաշխարհային տնտեսության մեջ:

Չնայած հանքարդյունաբերության տեսակարար կշիռը նվազել է, բայց ճյուղի զարգացման մակարդակը բարձր է՝ պայմանավորված օգտակար հանածոների հարուստ պաշարների առկայությամբ:

Էներգետիկան հենվում է առավելապես սեփական վառելիքային, մասնավորապես՝ ածխային և ջրաէներգետիկ պաշարների վրա: Քարածուխը ոչ միայն ապահովում է ներքին պահանջարկը, այլև արտահանվում է: Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրում են ջէկ-երը, փոքր մասը՝ ջրէկ-ները: Հնդկաստանը էլեկտրաէներգիայի արտադրությամբ արդեն երրորդն է աշխարհում՝Չինաստանից և ԱՄՆ-ից հետո:

• • •

Ոռոգման խնդիրների լուծմանն են ծառայում Գանգես, Բրահմապուտրա, Ինդոս և այլ գետերի ջրերը: Դրանք վերին հոսանքներում ունեն ջրաէներգետիկ մեծ ներուժ, հարթավայրային տարածքներում՝ ոչ միայն ոռոգիչ այլև՝ տրանսպորտային նշանակություն: Այդ առումով հսկայական է հնդուսականության դավանողների համար սուրբ գետի՝ Գանգեսի նշանակությունը: Մարդկության զարգացման արշալույսին , հին դարերում, Գանգես և Ինդոս գետերի հովիտներում արդեն գոյություն են ունեցել քաղաքակրթական

օջախներ:

Ճյուղի բաժինը ՀՆԱ-ի մեջ չնայած նվազել է, բայց արտադրանքի ծավալը զգալի է:Նվազել է գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը: Եթե նախկինում այն կազմում էր 60%, ապա այսօր այդ թիվը կրճատվել է մոտ երեք անգամ:

• • •

Առաջատար ճյուղը խոշոր եղջերավոր անասունների՝ կովերի ու գոմեշների բուծումն է: Դրանց գլխաքանակով Հնդկաստանն աշխարհում երկրորդն է 200մլն., առաջատարը Բրազիլիան է 230մլն. գլխաքանակով: Սակայն կաթնատվությունը շատ ցածր է և դրանք որպես քարշող ուժ առավելապես օգտագործվում են հողագործության մեջ:

Մանր եղջերավոր անասունների՝ այծերի և ոչխարների գլխաքանակով Հնդկաստանն աշխարհում երրորդն է:

Զարգացած են նաև շերամապահությունը, ձկնորսությունը, ծովային գյուղատնտեսությունը(աքվակուլտուրա):

• • •

Երկրի տնտեսական սրընթաց աճը անհնար է պատկերացնել առանց բազմաճյուղ և հզոր մեքենաշինության,որում օրեցօր մեծանում է գիտատատար ուղղությունների տեսակարար կշիռը: Համալիրը ներկայացված է ծանր՝ մետաղատար մեքենաշինությամբ, էլեկտրոնիկայով, համակարգիչների, նավերի, ավտոմեքենաների և այլ արտադրություններով: Ճյուղի զարգացման գործում մեծ է վերազգային մոնոպոլիաների դերը: Աննախադեպ աճ են արձանագրել ավիահրթիռաշինությունը և ռազմաարդյունաբերական համալիրը , որոնք հիմնականում կենտրոնացված են գիտական և ֆինանսական ներուժով հարուստ խոշոր քաղաքներում՝ **Նյու Դելի**, **Մումբայ**, **Կալկաթա**:

Հնդկաստանի զարգացած ճյուղերից է քիմիական արդյունաբերությունը, որն արտադրում է պարարտանյութեր, նավթամթերք: Խոշոր կենտրոնը **Բհոպալ** քաղաքն է:

• • •

Հնդկաստանը ջուտի հայրենիքն է և արտադրությամբ առաջատարը, որը, սակայն, մետաքսի և բամբակի արտադրությամբ՝ զիջում է միայն Չինաստանին:

Չնայած արդյունաբերության թռիչքաձև աճին, երկրում դեռևս խրախուս-

վում է ***թեթև արդյունաբերության գլխավոր եղանակը*** (ինչու՞):

Հնդկաստանը ալմաստի վերամշակման ամենախոշոր երկիրն է աշխարհում, որում ներգրավված է 100 հազար աշխատող: Երկրի՝ ալմաստի քաղաքը **Սուրատն** է՝ **Հուջարաթ** նահանգում:

Մանդի արդյունաբերության առաջատար ճյուղերից է շաքարի (եղեգնաշաքար) արտադրությունը, որով աշխարհում զիջում է միայն Բրազիլիային:

• • •

Չի կարելի միանշանակ ասել, որ Հնդկաստանը Մեծ Բրիտանիայի գաղութը դառնալուց հետո տնտեսապես տուժեց: Մեծ Բրիտանիա էին արտահանում բամբակ, ջուտ (կոպիտ թել, գործվածք), ծխախոտ գյուղատնտեսական այլ ապրանքներ, բազմազան հանքանյութեր, ներկրում՝ մեքենաներ, գործարանային սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ: Ժամանակակից Հնդկաստանը աշխարհի՝ թռիչքաձև տնտեսական աճ արձանագրող երկրներից մեկն է համարվում, և արդեն ուրվագծվում է «հնդկական տնտեսական հրաշքը»: **Նմանատիպ ինչ օրինակներ կարող եք նշել:**

• • •

Գյուղատնտեսությունը. Հնդկաստանը ճյուղի զարգացման համար ունի շատ նպաստավոր հողակլիմայական պայմաններ: Գյուղատնտեսական հանդակները կազմում են երկրի հողային ֆոնդի գրեթե կեսը, իսկ ոռոգվող հողերը՝ ¼-ը: Ոռոգվող հողատարածքների մակերեսով Հնդկաստանն աշխարհում առաջինն է:

• • •

Տրանսպորտը և արտաքին տնտեսական կապերը. Հնդկաստանը տրանսպորտի զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող զարգացող երկիր է: Առաջատար ճյուղը երկաթուղայինն է : Երկաթուղիների երկարությունը 65 հազար կմ է: Լավ արտահայտված է «գաղութային կոնֆիգուրացիան»: **Վերհիշեք հասկացությունը:**

Արտաքին բեռնափոխադրումներն իրականացվում են գերազանցապես ծովային տրանսպորտով:

• • •

Տնտեսությունը. Եվրոպացիներին գրավել է նաև համեմունքների առա-

տությունը: Կարելի է վստահորեն ասել, որ վերոնշյալ ապրանքատեսակ-ները մեծ դեր են խաղացել Հնդկաստանի հեքիաթային հարստություննե-րի վերաբերյալ եվրոպացիների պատկերացումներում, ինչն էլ իր հերթին նպաստել է Աշխարհագրական մեծ հայտնագործություններին: Հարկ է նշել, որ ցամաքային ճանապարհներով ապրանքները Հնդկաստանից Եվրոպա տեղափոխում էին հիմնականում արաբները, հետագայում էլ՝ հայ վաճա-ռականները: Սակայն այդ ճանապարհները XV դարի վերջերին դարձել էին վտանգավոր, ինչն էլ դարձավ ծովային ճանապարհով Հնդկաստան տանող կարճ ուղու հայտնագործման դրդապատճառը:

Ո՞ր ճանապարհների մասին է խոսքը, ինչու՞ էին դրանք դարձել վտանգավոր:

Վերհիշե՛ք հայտնագործման պատմությունը:

• • •

Գիտե՞ս, որ...

Կաստայականությունը դրսևորվում է նաև կենսակերպում, կենցաղում: Հնդուական հավատի համաձայն՝ կով չի կարելի մորթել և միսը ուտել, որովհետև կովը սուրբ կենդանի է: Կով մորթողները Հնդկաստանում դասվում են ամենացածր՝ «անմաքուր» կաստային:

Երկրում ինքնատիպ մտածելակերպ ունեն սիկխերը, որոնք ժխտում են կաստայականությունը և համարում են, որ Աստծո առաջ բոլորն են հա-վասար: Սիկխը չի ծխում, ալկոհոլ չի օգտագործում, նա ամբողջ հոգով ռազմիկ է, զիվորական: Հնդկաստանի ազգային բանակի սպայական կազմի մեծ մասը սիկխեր են: